

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԻԼԻԿՅԱՆԻ ԳՐՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱՆ

ՍԵՐԳԵՅ ԱՐՈՎՅԱՆ

ասպիրանտ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Գրական ստեղծագործության ձևավորումը բարդ ու բազմակողմանի աշխատանքի արդյունք է: Նկարիչ-ձևավորողը ստեղծագործության բովանդակությունը արվեստի մի ձևից՝ խոսքից, վերածում է մեկ այլ ձևի՝ պատկերային արվեստի: Նկարազարդման համար կարևորագույն հանգամանք է, թե նկարիչն ինքն ինչպես է վերաբերվում տվյալ ստեղծագործությանը: Նկարազարդումները պետք է անքակտելիորեն կապված լինեն գրական ստեղծագործության բովանդակության հետ, օգնեն գրողի ստեղծած երևակայական աշխարհի բացահայտմանն ու ընթերցողի կողմից գրական մտքի և կերպարների ընկալմանը¹:

Անդրանիկ Կիլիկյանի անունն ասոցացվում է մանկական գրքի հետ: Կիլիկյանի վարպետությունը դրսևորվում է այն բանով, որ նրա համար միշտ կարևոր է եղել հետևել մանկական ընկալման առանձնահատկություններին: Գրքի մեջ երեխայի համար ամենակարևորը՝ նկարների արտահայտչականությունն է, որին հասնելու համար նկարիչը երբեմն դիմում է պայմանական ձևերին²: Նա ընթերցողին չի լքում և ոչ մի վայրկյան՝ վերջինիս նվիրելով նորանոր տպավորություններ:

Կիլիկյանի մանկական գրքի ձևավորման ոճն իր ավարտուն տեսքը ստացավ 1980-ականներին: 1981թ. հրատարակված՝ Դավիթ Հովհաննեսի «Պստիկ է, բայց ճստիկ է» գրքում Կիլիկյանն արտահայտչականության է հասնում վառ գունային լուծումների միջոցով: Խայտաբղետ գունային հակադրումները երեխայի առաջ բացում են բարի եւ ուրախ հերոսներով լի մի խոսուն հեքիաթային աշխարհ: Այս գրքի պարզությունը մանկական հրճվանք է պատճառում նաև մեծահասակներին, որոնք, թերթելով այն, անասկած մի քանի րոպեով վերադառնում են մանկություն: Գունագեղ նկարները դինամիկ շարժմամբ են օժտված: Նկարիչը վստահում է թղթի էջի մաքուր տարածությանը և, չծանրաբեռնելով այն, հենց այդ սպիտակ տարածության մեջ է կառուցում ամբողջ կոմպոզիցիան:

1982 թվականին հրատարակված՝ Հ. Թումանյանի «Փիսիկի գանգատը» գրքույկում ցայտուն երեւում է նկարչի որդեգրած միանգամայն նոր մոտեցումները³՝ նախկին՝ 1954 թվականին արված ձևավորման համեմատությամբ, որի հեղինակն է Ս. Ստեփանյանը: Այստեղ սյուժեն բացահայտվում է սկսած գրքի կազմից:

1 Դավդյան Ռ., Բանավեճ. Եթե գրքի ձևավորումը արվեստ է..., «Սովետական արվեստ», 1984թ., N10, էջ 9

2 Խալաթյան Լ., Ինչպես են նկարազարդում մանկական գիրքը, «Սովետական արվեստ», 1982թ., N7, էջ 17

3 Եղիազարյան Մ., Անդրանիկ Կիլիկյան հումանիստը, «Հայոց Աշխարհ», 2006թ., հոկտեմբերի 28, էջ 8

Գործողությունների հետևում բացվում է գյուղական տեսարան, թղթի հարթ մակերեսը դառնում է իրական տարածություն: Ընթերցողը հայտնվում է մտացածին և, միևնույն ժամանակ, լիովին իրական աշխարհում, դառնալով դրամատիկ և, միևնույն ժամանակ, զվարճալի ներկայացման վկա: Կիլիկյանը հնարամտորեն է ձևավորել գրքի վերջին երկու էջերը. առաջինին փիտոն անկյունում լալիս է, իսկ հաջորդ էջին նկարիչը շարունակում է պատմությունը՝ ծածկոցի տակից վախեցած, չարաճճիորեն ընթերցողին նայող Համոյի կերպարով: Նկարչին ամբողջովին հաջողվել է հաղորդել սյուժեի հուզական մթնոլորտը, երեխաների և հատկապես՝ Համոյի կերպարը կերտելիս, Կիլիկյանը նոր երանգ է հաղորդել բանաստեղծությանը. հերոսներն այստեղ բարի են, իսկ իրավիճակն ուղղակի ծիծաղելի:

1983 թվականին լույս է տեսնում Աթաբեկ Խնկոյանի «Մկների ժողովը»՝ ռուսերեն լեզվով: Մինչ այդ, այս գրական երկն արդեն մի քանի անգամ հրատարակվել էր անգլերեն լեզվով, այդ թվում նաև Վ. Մանդակունու ձևավորմամբ: «Մկների ժողովը» բացառիկ տեղ ունի Կիլիկյանի ստեղծագործական կյանքում: Այս ձևավորումը նոր խոսք էր ոչ միայն նրա ստեղծագործության, այլ նաև հայկական տպագրական գրքի պատմության մեջ: Այստեղ համատեղվում են տաղանդավոր նկարիչը և հնարամիտ գյուտարարը: Ներկերով կերտված պատկերների հետ նա ստեղծել է նաեւ հիանալի կոլաժներ՝ օգտագործելով բազմապիսի ժանյակներ, չթե, քաթանե, պարկե կտորներ: Այս կոլաժները նոր շունչ, որոշակի ծավալ և նյութեղեն տեսք են հաղորդում նկարազարդումներին: Հայկական տպագրական գրաֆիկայում նախկինում դեռ ոչ մի նկարիչ այսպիսի համարձակ քայլի չէր դիմել: Գունագեղ կտորներով հարմարեցված հագուստները մկներին անսովոր կենդանություն են տալիս, և գրքի յուրաքանչյուր էջին հայկական ազգային տրամադրությունն է իշխում (գուն. պտկ. 6): Կիլիկյանը, կտորների միջոցով տարածությունը տրոհելով, այն դարձնում է երկպալան: Կիլիկյանին այստեղ հաջողվել է ստեղծել ներքին հարուստ բովանդակությամբ մկների կերպարներ՝ օժտված մարդկային շարժունակ և զգացմունքներով, որոնց միջոցով էլ կարողացել է բացահայտել հեքիաթի խորիմաստ միտքը (նկ.1):

Այս գիրքը շրջադարձային կետ հանդիսացավ Կիլիկյանի ստեղծագործության համար: Այն բարձր գնահատվեց ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս՝ Վիլնյուսում (Լիտվայում) արժանանալով առաջին մրցանակի:

Բացի հայկական հեքիաթներից, Կիլիկյանը ձևավորել է նաև այլ ժողովուրդների գրական գանձարանին պատկանող գործեր: 1987 թվականին նկարազարդվում են ռուսական ժողովրդական, 1989 թվականին՝ հնդկական ժողովրդական հեքիաթները: Այս երկու գրքերի նկարազարդումները փաստում են, որ Կիլիկյանն անձայրածիր երևակայության տեր և ինքնատիպ սուր աչք ունեցող արվեստագետ էր: Այս ժողովուրդների կենցաղն ուսումնասիրելով՝ նա փոխանցում է նրանց բնորոշ մտածելակերպն ու նիստուկացը, երբեմն թղթին է հանձնում անգամ այնպիսի հագեցած, հարուստ մանրամասներ, որոնք միշտ չի հաջողվում որսալ տեքստում:

Հենց մանրամասների դեկորատիվ հագեցածության շնորհիվ է, որ Կիլիկյանը հասնում է բարձր արտահայտչականության: «Ռուսական ժողովրդական հեքիաթներում» նկարիչը տեսարանները պատկերել է առանձին էջերի վրա՝ տեքստից առանձնացված, և ներառել է նախշային շրջանակների մեջ⁴: Պարզ, մաքուր գույների օգնությամբ նկարիչը տեսարանին հաղորդում է հեքիաթային, կախարդական մթնոլորտ՝ նույնիսկ բացասական հերոսներին օժտելով բարության և մեղմությամբ:

Իր նկարազարդումներում Կիլիկյանը զուգակցում է գրաֆիկան գեղանկարչության հետ: Նրան օտար է զուտ չոր գիծը. մանրամասն աշխատելով գծանկարի վրա՝ նա նույնպիսի ուշադրությամբ է մշակում գունային համակարգը, ճկուն և շարժուն վրձնահարվածներով կենդանացնում տեսարանը⁵: Ամբողջ էջով մեկ արված պատկերներում այդքան իրարից տարբերվող հերոսներից յուրաքանչյուրի համար նկարիչը յուրովի մոտեցում է գտել:

Այլ ժողովուրդների հեքիաթներ նկարազարդելու համար նկարչին ոչ միայն անսպառ երևակայություն է անհրաժեշտ, այլև կարողություն՝ արտացոլելու տվյալ մշակույթի ոճն ու մտածելակերպը: 1989 թվականին Տոկիոյում հրատարակվում է Հ. Թումանյանի մշակմամբ «Արջի որդին» հեքիաթը՝ ճապոներեն լեզվով: Նկարչի ձեռագիրն այստեղ մեծ փոփոխությունների չի ենթարկվում: Սրանք միմյանց հաջորդող առանձին երկեր են, որոնցում պատկերված կերպարներին ամբողջության մեջ է միավորում նկարչի կերտած հեքիաթային զգացմունքների աշխարհը: Այստեղ Կիլիկյանի համար կարևոր է դարձել դեկորատիվությունը: Գրքի յուրաքանչյուր էջը հիացնում է իր լուծման անսպասելիությամբ: Ճապոներեն տեքստը, որքան էլ զարմանալի է, չի խանգարում հայկական հեքիաթին, դառնալով ուղղակի առանձին-առանձին կոլաժներ:

Առաջին տեսարանը ներկայացնող թերթի վրա Կիլիկյանն, ասես մտածված, պատկերել է Մասիս սարը, որը հավանաբար ճապոնացիներին և հայերին իրար մոտեցնող միակ բանն է, քանի որ ճապոնացիների սուրբ սարը՝ Ֆուձի-յաման, իր տեսքով հիշեցնում է Փոքր Մասիսը: Նկարիչն այն պատկերել է ցանցի օգնությամբ, որի հատվածները մուգ կապույտով գունավորելով՝ ծավալայնություն է ստացել: Նույն նյութից պատրաստված ամպերն ասես անցնում են թղթի գունավորված մակերեսի վրայով՝ թեթև սահունություն և շարժում հաղորդելով տեսարանին: Ինտերիերը ներկայացնող տեսարաններում նկարիչը լայնորեն օգտագործել է զարդարուն ժանյակներ, որոնց միջոցով հորինվածքը տրոհել է մի քանի պլանի: Բնապատկերային եռապլան, քառապլան տարածական տեսարաններում նա գունային համադրությունների միջոցով ընդգծում է տարածության անսահմանություն:

4 Запорожец А. , Психология восприятия ребенком-дошкольником литературного произведения, «Тезисы докладов».— М., 1948, с 78

5 Անանիկյան Բ., Հայ գրչության ու կերպարվեստի դաշինք, «Սովետական արվեստ», 1984թ., N2, էջ 17

ներ՝ տեղավորելով այն փոքրիկ գրքի թերթերի շրջանակներում:

Այս հրատարակությունը տարբերվում է Հայաստանում լույս տեսած գրքերից: Նկարչի օգտագործած գույները պայծառ են ու հյութեղ⁶, իսկ կիրառած հնարքներն ավելի հարուստ տեսք են հաղորդում: Վառ գույները շեշտում են կերպարների անհատականությունը: Գիրքը թերթելով էջ առ էջ՝ կարելի է վայելել նկարների հեքիաթային շքեղությունը: Գործողությունը ծավալվում է հորիզոնական ուղղությամբ, ընթերցողին, ասես, ուղեկցելով դեպի հաջորդ էջը: Յուրաքանչյուր էջին պատկերված ֆիգուրները ռելիեֆային են ու հյութեղ:

Այս գիրքը, ձևավորման յուրօրինակության համար, ճապոնիայում նույն թվականին արժանացել է Գրան Պրի մրցանակի: Հայկական գրքերը Հայաստանի սահմաններից դուրս հազվադեպ են մրցանակի արժանացել, և սա ապացուցում է, որ Կիլիկյանը գրքի ձևավորման առաջնակարգ վարպետ էր համարվում ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում:

Հայաստանի անկախացումից հետո, երբ առաջին տարիներին հազվադեպ էին գրքեր լույս տեսնում, Կիլիկյանն աշխատում է Բեյրութի և Անթիլիասի հրատարակչությունների հետ: Այսպես, 1994թ. Անթիլիասում հրատարակվում է «Սասունցի Դավիթ» գրքերի շարքը՝ նախատեսված պատանիների համար: Փոքրիկ գրքերի տեսքով ներկայացված են հատվածներ էպոսից: Տեսարանները պատկերված են առանձին էջերի վրա՝ տեքստից զատված:

Հայ արվեստագետները բազմիցս են անդրադարձել էպոսին՝ Կոջոյան, Քոչար, Ռաշմաջյան, Մամաջանյան: Կիլիկյանի ձևավորումը լիովին տարբերվում է նախկինում ստեղծված օրինակներից: Դարերի պատմություն ունեցող դյուցազնավեպը Կիլիկյանի նկարազարդումներում առավելագույն պարզությամբ է պատկերված, զուսպ և վեհանձն ժեստերով և անխռով էպիկականությամբ: Սյուժետային նկարներում Կիլիկյանը հրաժարվում է ջրաներկից և օգտագործում է միայն գրչաձայրը, որի դիպուկ հպումները գծանկարը դարձնում են դինամիկ և շարժուն: Գործողությունը ծավալվում է առաջին պլանում խոշոր ֆիգուրների օգնությամբ, իսկ հետին պլանում անսովոր դիտակետերով պատկերված են հայկական բնաշխարհին ու ճարտարապետական կառույցները: Ձևերը մանրակրկիտ մշակված են, ճկուն ու շարժուն լինելով՝ արտահայտիչ են և էքսպրեսիվ: Հականն այստեղ այն է, որ Սասունցի Դավիթ կերպարը կոսմիկական բնույթ չի կրում. պատկերված Դավիթը պարզապես հպարտ, ուժեղ ու վեհանձն պատանու կերպարով է: Էպոսի այս մեկնաբանությունը միանգամայն պարզ է՝ նկարչի համար յուրաքանչյուր հայ պատանի Սասունցի Դավիթ է: Նկարիչն անուշադրության է մատնում երկրորդական նշանակության երևույթները և չափազանցում է միայն նրանք, որոնք անհրաժեշտ են ամենաէականն արտահայտելու համար:

6 Ղազարյան Վ., Անդրանիկ Կիլիկյան պայծառ մարդը, տաղանդավոր արվեստագետը և բնածին մանկավարժը, «Հոգևոր Հայրենիք», 2005թ., սեպտեմբեր, էջ 8

Կիլիկյանի խորքային էության մեջ էր մանկական գիրքը ձևավորողի տաղանդն ու կոչումը⁷: Մանկապատանեկան գրքի նկարազարդումներում նրան հաջողվել է ստեղծել իր ինքնուրույն ոճը՝ նոր և թարմ շունչ հաղորդելով հայկական գրքային գրաֆիկային: Չխախտելով գրական սյուժետային կառուցվածքը՝ նկարիչն ստեղծել է մանկական մտածողությանը հասանելի գրքեր, ինչն այս ասպարեզում ամենակարևորն է: Ասես դրանց միջոցով նկարիչն անմիջականորեն հաղորդակցվում է յուրաքանչյուր երեխայի հետ:

THE BOOK GRAPHICS OF ANDRANIK KILIKYAN

SERGEY ABOVYAN,

PhD, Institute of Arts, National Academy of Sciences of Armenia

In article is investigated creativity of one of the brightest representatives of the Armenian book graphics of the second half of the 20th century – Andranik Kilikyan. Remaining faithful to the literary text, the artist creates original images, conformable to children's attitude. Bright color schemes, the thought-over composition create illusion of a travel on a picture, for many years forming esthetic taste and perception fine at the child.

Key words: Book graphics, Andranik Kilikyan, the literary text, children's attitude, color schemes, the thought-over composition, esthetic taste, “A meeting of mice”, “The complaint of a kitten”, “The bear son”, “David from Sasun”.

КНИЖНАЯ ГРАФИКА АНДРАНИКА КИЛИКЯНА

СЕРГЕЙ АБОВЯН,

аспирант, Институт Искусств АН РА

В статье исследуется творчество одного из ярчайших представителей армянской книжной графики второй половины 20 века – Андраника Киликяна. Оставаясь верным литературному тексту, художник создает оригинальные образы, созвучные детскому мировосприятию. Яркие цветовые решения, продуманная композиция создают иллюзию путешествия по картине, на долгие годы формируя эстетический вкус и восприятие прекрасного у ребенка.

Ключевые слова: Книжная графика, Андраник Киликян, литературный текст, детское мировосприятие, цветовые решения, продуманная композиция, эстетический вкус, , «Маленький, да удаленький», «Собрание мышей», «Жалоба котенка», «Сын медведя», «Давид Сасунский».

⁷ Չքնաղ գույների վարպետը, «Միիր», 2003թ., հունվար, էջ 21



Նկար 1. Գրիմ եղբայրներ
Բրեմենյան երաժիշկները



Նկար 2. Գրիմ եղբայրներ
Բրեմենյան երաժիշկները